ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

27.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/195

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.12.2018թ. թիվ 27/26-3/23317-18 գրությամբ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 10.11.2018թ. թիվ ԴԴ 3-Ե-9998 գրության հիման վրա, 14.12.2018թ. «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ դատական դեպարտամենտը 10.11.2018թ. թիվ ԴԴ 3-Ե-9998 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ եմ ներկայացնում ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ դատական դեպարտամենտի լիազորված ներկայացուցիչ Արթուր Եղիազարյանը:

3. «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն 20.12.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Հայտնում եմ Ձեզ, որ ծանոթանալով ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով Գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 29.08.2018թ. արձանագրությանը, որից պարզ դարձավ, որ մեր ընկերության հայտը մերժվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն ունենալու պատճառով, որը կազմում է մեր կողմից սույն գնանշման հարցման 2-րդ չափաբաժնով ներկայացրված գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը և այդ հիմքով մեր ընկերությունը համարվել է չափորոշիչներին չհամապատասխանող և մերժվել է հետագա մասնակցությունը:

Վերոհիշյալը պարզելու համար մենք դիմեցինք մեզ սպասարկող տարածքային հարկային տեսչությանը, որպեսզի մեզ տրամադրի պարտք ու պահանջի մասին տեղեկանք 04.12.2018թ. օրվա դրությամբ, ստանալով տեղեկանքը պարզ դարձավ, որ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ», ունի 3000 ՀՀ դրամի գումարի չափով պարտք՝ դրոշմանիշային վճարի գծով:

Ուսումնասիրություն կատարելով մեզ մոտ պարզ դարձավ, որ մեր հաշվապահի շփոթության արդյունքում է նման բան տեղի ունեցել, մեր կողմից չի եղել ոչ մի դիտավորություն և մենք ամենայն պատասխանատվությամբ ենք մոտեցել պետության կարիքների համար մեր կողմից մատուցվելիք ծառայությունների որակյալ մատուցմանը, ինչպես նաև գնման հրավերների պահանջներին, մեր ընկերությունը 2018թ. ընթացքում մասնակցել է վեցից ավելի մրցույթների, որի արդյունքում ճանաչվել է հաղթող և բարեխղճորեն կատարել է իր բոլոր պարտավորությունները, մեր կողմից հարկային պարտավորությունները կատարվել են ժամանակին, դեռ ավելին միշտ միասնական հաշվում ունենում ենք ավել գումար քան մեր մոտ գոյացած հարկերն են, իսկ այդ երեք հազար ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի չվճարված լինելը զուտ մարդկային գործոնով է պայմանավորված, այլ ոչ թե հրավերի պահանջները չկատարելուն:

Անկախ վերը շարադրված հանգամանքներից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը ուզում եմ հրավիրել այն հանգամանքին, որ ըստ ՀՀ օրենսդրության դրոշմանիշային վճարը չի համարվում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ:

Մանրամասնեմ. ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Վերոհիշյալ հոդվածը սահմանում է այն հանգամանքը, որի առկայության դեպքում մեր ընկերությունը իրավունք չուներ մասնակցելու սույն մրցույթի 2-րդ չափաբաժնին, բայց մեր կողմից չի խախտվել այս հոդվածի պահանջը, քանի-որ համաձայն հարկային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ այն է.

1. Հարկային պարտավորություն է համարվում որևէ տեսակի հարկի և (կամ) վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության

օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Օրենսգրքի 16-րդ բաժնի կիրառության իմաստով՝ հարկային պարտավորությունը ներառում է միայն հարկերի (բացառությամբ ճանապարհային հարկի, տեղական հարկերի, ինչպես նաև բնապահպանական հարկի գծով պարտավորության այն գումարների, որոնց համար, Օրենսգրքի 8-րդ բաժնի համաձայն, հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ սահմանված չէ), սոցիալական վճարի, բնօգտագործման վճարի (բացառությամբ բնօգտագործման վճարի գծով պարտավորության այն գումարների, որոնց համար, Օրենսգրքի 10-րդ բաժնի համաձայն, հարկային հաշվարկ ներկայացնելու պահանջ սահմանված չէ) և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) սույն մասում նշված վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) սույն մասում նշված վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը:

Որից պարզ երևում է, թե որ հարկատեսակները և պարտադիր վճարներն են հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ, այսինքն մենք ենթարկվում ենք օրենքի պահանջներին, իսկ օրենքի պահանջով դրոշմանիշային վճարը չի հանդիսանում հարկային մրմնի կողմից վերահսկվող եկամուտ, հետևաբար չի կարող հիմք հանդիսանալ մեր հանդեպ վարույթ հարուցելու համար, անկախ այն հանգամանքից թե դա արտացոլված է ՀՀ պետական եկամուտների տեղեկանքներում և ևս մի կարևոր հանգամանքի վրա կուզենաի հրավիրել հանձնաժողովի ուշադրությանը, կից ներկայացվող տեղեկանքում հստակ երևում է մեր ընկերության հաշվեկշռում միասնական հաշվում առկա է 37.938 ՀՀ դրամը, այսինքն, եթե հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մեր ընկերությունը ունենար պարտավորություն, ապա այս գումարից կկատարվեր մարում, իսկ դրոշմանիշային վճարը առանձին վճարվում է,

որի չվճարելու համար տույժ և տուգանք չկա, ինչը ևս մեկ անգամ խոսում է այդ վճարի չվճարված լինելը չի վերաբերվում մեր հարցին:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Մեսրոպ Աղազարյանը և Արտակ Հակոբյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/195 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2018թ. թիվ 27/26-3/23317-18 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.11.2018թ. թիվ ԴԴ 3-Ե-9998 գրությունը և կից փաստաթղթերը, «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի 20.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 04.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 և 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին տրված թիվ 1470 տեղեկանքը, 04.12.2018թ. դրությամբ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.12.2018թ. տրված եզրակացությունը.

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար՝ կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով կազմել է՝ 216.000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը՝ 04.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով որոշել է ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և համապատասխան հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.12.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 3000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, 10.12.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ առաջացած 3000 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց հարկային պարտավորությունը, ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրված թիվ 1470 տեղեկանքի, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով, սակայն այն հանգամանքը, որ դրոշմանիշների վճարը վերհսկվող եկամուտների գծով առանձին վճարման ենթակա պարտավորություն է, որևէ տեղ արտացոլված չէ: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն

հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (04.12.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 04.12.2018թ. դրությամբ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին տրված թիվ 1470 տեղեկանքը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար՝ կենցաղային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/49 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին
- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի

հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների •ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.
- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 07.12.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (04.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 3000 ՀՀ դրամ:

- «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (04.12.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել

բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2018թ. թիվ 27/26-3/23317-18 գրությամբ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ